ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

03.01.2025թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Ներքին Գործերի նախարարությունը (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ), ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ ի դեմս կազմակերպության տնօրեն Հ. Դանիելյանի (այսուհետ՝ Դրամաշնորհ ստացող), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշմամբ նախատեսված բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով՝ ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 19-ի «Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսապահովման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» N1440-Ն որոշմամբ միջոցառումների (այսուհետ՝ Աշխատանքներ) իրականացման նպատակով, դրամաշնորհի տրամադրման համար կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի «Ապաստան հայցողների կեցության խնդիրների լուծման միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում հատկացված դրամաշնորհի գումարից 87,738,200 (ութսունյոթ միլիոն յոթ հարյուր երեսունութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումարը, ըստ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային (աճողական) բաշխվածությանը համապատասխան՝ ամսական համամասնություններով, պարտավորվում է տրամադրել Դրամաշնորհ ստացողին, ապահովել ՀՀ-ում ապաստան հայցողների «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքին համապատասխան հատուկ կացարանում տեղավորումը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապաստան հայցողների կենսապահովման պայմանների տրամադրումը՝ կեցության խնդիրների լուծման համար:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու Դրամաշնորհ ստացողի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, պահանջել տեղեկատվություն կատարվող աշխատանքների բնութագրերի վերաբերյալ.

2.1.2. կատարված աշխատանքներում թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել վերացնել նշված թերությունները, ներկայացնել առաջարկություններ.

2.1.3. պարբերաբար վերահսկել ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը.

2.1.4.վերահսկել Դրամաշնորհ ստացողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը.

2.1.5. օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

2.2. Դրամաշնորհ ստացողը իրավունք ունի՝

2.2.1. Պետական մարմնից պահանջելու վճարել սույն պայմանագրին համապատասխան կատարված ծառայությունների դիմաց տրամադրվող դրամական հատկացումները.

2.2.2. տեղեկացնել Պետական մարմնին սույն պայմանագրով նախատեսված գործունեության ընթացքում տեղ գտած թերությունների վերաբերյալ.

2.2.3. օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ընդունել սույն պայմանագրի N 2 հավելվածին համապատասխան մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների արդյունքները.

2.3.2. սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարն ամսական համամասնություններով փոխանցել Դրամաշնորհ ստացողի գանձապետական հաշվին.

2.3.3. պարբերաբար վերլուծել Դրամաշնորհ ստացողի կողմից մատուցվող ծառայությունները, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման համար.

2.2.4. ապաստան հայցող չլինելու դեպքում Դրամաշնորհ ստացողը սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված գումարից պակասեցնել բոլոր ծախսերը՝ բացառությամբ «աշխատանքի վարձատրության», «կապի և կոմունալ» ծախսային հոդվածների գծով ծախսերը:

2.4. Դրամաշնորհ ստացողը պարտավոր է՝

2.4.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ապահովել ապաստան հայցողների կենսապահովումը.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև յուրաքանչյուր ամսվա 7-ը Պետական մարմին ներկայացնել նախորդ ամսվա գումարների հայտ-պահանջագրերը և ծառայությունների ընդունման-հանձնման ակտերը՝ համաձայն Հավելվածներ 1-ի և 2-ի, ուղեկցող գրությամբ.

2.4.5. Պետական մարմին ներկայացնել օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքների իրականացման մասին հաշվետվություններ՝ եռամսյակային, կիսամյակային, ինը ամսվա և տարեկան, իսկ տարեվերջում՝ տարեկան արդյունքների ամփոփ հաշվետվություն, անհրաժեշտության դեպքում կից բացատրագրով.

2.4.6. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.

2.4.7.միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2025թ. թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Դրամաշնորհի տրամադրման և ծախսման կարգը

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն այդ կետում նշված նպատակներին համապատասխան ծրագրերի իրականացման համար:

3.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցների, կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում կատարվում է ոչ նպատակային օգտագործված գումարի հետգանձում:

3.3. Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պետական մարմինը պայմանագրի 1.1 կետում նշված գումարը Դրամաշնորհ ստացողի փաստացի կատարած աշխատանքների և մատուցած ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ՝ Դրամաշնորհ ստացողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով, Պետական մարմին ներկայացված հայտ-պահանջագրերի և ընդունման-հանձնման ակտերի հիման վրա, մինչև հաջորդող ամսվա 10-ը:

3.4. Դրամաշնորհ ստացողը պետք է 1.1 կետում նշված ֆինանսական միջոցների հաշվապահական հաշվառումը վարի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Պայմանագրով սահմանված պայմանների չկատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2025թվականի դեկտեմբերի 31-ը:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Պայմանագիրը կարող է փոխվել կամ լուծվել Կողմերի համաձայնությամբ:

7.2 Պայմանագրի փոփոխությունը կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր, Կողմերի գրավոր համաձայնությամբ:

7.3 Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ամբողջությամբ կամ մասամբ լուծել կամ փոխել սույն պայմանգրի որևէ պայման:

7.4 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

7.5 Սույն պայմանագիրը կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Դրամաշնորհի ստացող**
ՀՀ ներքին գործերի նախարարություն	«Հատուկ կացարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Նալբանդյան փ.130	ք. Երևան, Մոլդովական 29/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գանձապետական հաշվի համար
Հ/Հ 900011049187	Հ/Հ 900018002437
ՀՎՀՀ 02882913	ՀՎՀՀ 00854998
ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար	«Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ի տնօրեն
_____ Ա. Ֆիդանյան	_____ Հ. Դանիելյան